

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհրդի նախագահ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մարտ, 2023 թվականի N 9-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ **ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ**.

- Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2023 թվականի մարտի 17-ին՝ ժամը 12:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:
- Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

- Հանրային հեռարձակողի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 21-ի N 61-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:
- Հանրային հեռարձակողի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 21-ի N 62-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:
- «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գույքի շուկայական արժեքը սահմանելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

14 մարտ, 2023 թվական
ք. Երևան